

20  
ՀՈՒՆԻՍ  
2024



ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ 2023Թ.  
ՏԱՐԵԿԱՆ ՀԱՂՈՐԴՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

### ՀՀ հաշվեքննիչ պալատի 2023թ. տարեկան հաղորդման վերաբերյալ

Ռիսկերի վրա հիմնված հաշվեքննությունների վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն



Ազգային ժողովն օրերս ընդունեց ի գիտություն Հաշվեքննիչ պալատի (այսուհետ՝ ՀՊ) 2023 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդումը, համաձայն որի՝ 2023 թվականի գործունեության ծրագրի շրջանակներում ՀՊ-ի կողմից իրականացվել է **54** հաշվեքննություն, այդ թվում՝ 2022 թվականի պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման **40** հաշվեքննություն, ռիսկերի վրա հիմնված մեթոդաբանությամբ հաստատված **12** հաշվեքննություն, և **2** հաշվեքննություն իրականացվել է միջազգային պայմանագրերով նախատեսված համատեղ միջոցառումների շրջանակներում:

ՀՀ Սահմանադրության և «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ՀՀ պետական բյուջեի կատարման նկատմամբ հաշվեքննությունների արդյունքներն ամփոփող հաշվետու տարվա եզրակացությունը, որպես ինքնուրույն փաստաթուղթ, ներկայացվում է ԱԺ և հրապարակվում Հաշվեքննիչ պալատի [www.armsai.am](http://www.armsai.am) կայքում: Այդ իսկ պատճառով, ՀՊ տարեկան հաղորդումը այն չի ներառում, այլ դրանում 2022 թվականի պետական բյուջեի կատարման հաշվեքննությունների վերաբերյալ ընդամենը ամփոփ տեղեկատվություն է ներկայացված:

Սույն տեղեկանքում հակիրճ ներկայացված է ՀՊ-ի 2023թ. տարեկան հաղորդումից **ռիսկերի վրա հիմնված մեթոդաբանությամբ իրականացված հաշվեքննությունների** վերաբերյալ տեղեկատվությունը:

Ռիսկերի վրա հիմնված մեթոդաբանությամբ 2023 թվականին նախատեսված **14** հաշվեքննությունից իրականացվել է **12**-ը (արդյունքները հրապարակվել են հաշվետու ժամանակահատվածում), իսկ **2**-ը ճանաչվել է ուժը կորցրած<sup>1</sup>

<sup>1</sup> 1. Առողջապահության նախարարություն. ոչ վարակիչ հիվանդությունների բժշկական օգնության

(գործունեության ծրագրի մեջ փոփոխություններ կատարելու հիմքով):

Իրականացված հաշվեքննությունների ընթացիկ եզրակացությունները սահմանված կարգով ներկայացվել են Ազգային ժողով, կառավարություն և համապատասխան հաշվեքննության օբյեկտներ, ինչպես նաև հրապարակվել են Հաշվեքննիչ պալատի պաշտոնական և ՀՀ հրապարակային ծանուցումների կայքերում:

Կիրառվել են հաշվեքննության բոլոր **3 տեսակները՝**

- **Ֆինանսական,**
- **համապատասխանության,**
- **կադրարողականի:**

Հրապարակված **12** հաշվեքննություններից **1-ի** դեպքում կիրառվել է հաշվեքննության *ֆինանսական, 7-ի* դեպքում՝ *կադրարողականի* տեսակները: Մնացած **4-ի** դեպքում *ֆինանսական* և *համապատասխանության* հաշվեքննությունները համակցվել են:

Ֆինանսական և համապատասխանության հաշվեքննությունների արդյունքներով Հաշվեքննիչ պալատը ներկայացնում է հաշվեքննության կարծիքների հետևյալ տեսակները.

• «*դրական եզրահանգում*», եթե ստացվել է բավարար տեղեկատվություն հաշվեքննություն իրականացնելու համար, և էական խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել,

• «*ոչ լիարժեք եզրահանգում*», եթե հայտնաբերվել են էական խեղաթյուրումներ, դրանց հետևանքները համատարած չեն, և հաշվետվություններն էականորեն խեղաթյուրված են, կամ հայտնաբերվել են էական խեղաթյուրումներ, դրանց հետևանքները համատարած չեն, և անհնարին է ստանալ բավարար տեղեկատվություն հաշվեքննություն իրականացնելու համար,

• «*բացասական եզրահանգում*», եթե հայտնաբերվել են էական խեղաթյուրումներ, դրանց հետևանքները համատարած են, և հաշվետվություններն էականորեն խեղաթյուրված են,

• «*հրաժարում եզրահանգում ներկայացնելուց*», եթե հայտնաբերվել են էական խեղաթյուրումներ, դրանց հետևանքները համատարած են, և անհնարին է ստանալ

ապահովման կատարողականի հաշվեքննություն.

2. Վարչապետի աշխատակազմ. կայուն զարգացման նպատակներին (ԿՁՆ) հասնելու պատրաստվածության կատարողականի հաշվեքննություն:

բավարար տեղեկատվություն հաշվեքննություն իրականացնելու համար:

Իրականացված հաշվեքննություններից **ոչ մեկի** մասով չի տրամադրվել «*դրական եզրահանգում*» կարծիք: **Չորսի** մասով տրվել է «*ոչ լիարժեք եզրահանգում*», իսկ **մեկի** մասով՝ «*բացասական եզրահանգում*» կարծիք (տե՛ս Աղյուսակը): Հաշվետու ժամանակահատվածում իրականացված հաշվեքննությունների արդյունքներով «*հրաժարում եզրահանգում ներկայացնելուց*» կարծիք նույնպես չի տրամադրվել:

### Աղյուսակ. Ֆինանսական և համապատասխանության հաշվեքննությունների շրջանակներում տրամադրված կարծիքները

| Կարծիք                 | Հաշվեքննություն                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                          |
|------------------------|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| Ոչ լիարժեք եզրահանգում | <ol style="list-style-type: none"> <li>1. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն</li> <li>2. Գեղարքունիքի մարզպետարանի ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն</li> <li>3. Շիրակի մարզպետարանի ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն</li> <li>4. ՀՀ ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ ֆինանսական հաշվեքննություն</li> </ol> |
| Բացասական եզրահանգում  | <ol style="list-style-type: none"> <li>1. Արտաշատի համայնքապետարանի ֆինանսատնտեսական գործունեության ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն</li> </ol>                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                           |

Հաշվեքննիչ պալատը **կատարողականի** հաշվեքննություններով ներկայացնում է կատարողականի հաշվեքննության սկզբունքների (3E-երի) պահպանման վերաբերյալ հաշվետվություններ: Այդ սկզբունքներն են՝

- *տնտեսումը* (economy), որով գնահատվում է, թե որքանով են նվազագույնի հասցվել նախատեսված (ձեռք բերվող) ռեսուրսներին ուղղված ծախսերը՝ սահմանված ժամկետի, որակի, քանակի, ծավալի պահպանմամբ և համարժեք հատուցմամբ,
- *նպատակային արդյունավետությունը* (օգտավետություն, effectiveness), որով գնահատվում են սահմանված նպատակների իրականացումը և պլանավորված արդյունքների ստացումը,
- *ծախսային արդյունավետությունը* (արդյունավետություն, efficiency), որով գնահատվում է նախատեսված ռեսուրսների օգտագործմամբ համապատասխան որակով, քանակով և ժամկետում առավելագույն արդյունքների ստացումը:

Կատարողականի հաշվեքննության հաշվետվություններում տնտեսման

սկզբունքի չպահպանման դեպք չի արձանագրվել, իսկ նպատակային արդյունավետության և ծախսային արդյունավետության սկզբունքների չպահպանման դեպքերի թիվը համապատասխանաբար 4 և 1 է:

Հաշվեքննությունների ընթացքում բացահայտված անհամապատասխանությունների, խեղաթյուրումների և ռիսկեր պարունակող դեպքերի վերացման ու կանխարգելման, ինչպես նաև գործընթացների արդյունավետության բարձրացման համար ՀՊ կողմից ՀՀ կառավարությանը, հաշվեքննության և ստուգման օբյեկտներին, ինչպես նաև շահագրգիռ այլ մարմիններին ներկայացվել է **59 առաջարկություն**, որից՝

- **22-ը՝ համակարգին միտված** (առաջարկություններ, որոնք նպատակ են հետապնդում բարձրացնելու կառավարման, ֆինանսական, իրավական համակարգերի գործունեության արդյունավետությունը),

- **17-ը՝ արդյունքին միտված** (առաջարկություններ, որոնք նպատակ են հետապնդում բարելավելու ծրագրերը և ծառայությունները նպատակներին և ակնկալվող արդյունքներին հասնելու համար),

- **20-ը՝ խնդիրների բացահայտմանը/լուծմանը միտված** (առաջարկություններ, որոնց նպատակն է վերացնել/շտկել հաշվեքննության արդյունքում բացահայտված անհամապատասխանություններն ու խեղաթյուրումները, ինչպես նաև նպաստել տնտեսման, ծախսային և նպատակային սկզբունքների չպահպանման հետ կապված խնդիրների լուծմանը):

**2023թ. հրապարակված հաշվեքննությունների արդյունքների շրջանակներում 8 առանձին ուղղություններով նախաձեռնվել է քրեական վարույթ, որոնցից 6-ը գտնվում է նախաքննություն ընթացքում, իսկ 2-ը կարճվել է (տե՛ս Հավելվածը):** Հավելվածում ներառված չեն նախկինում նախաձեռնված այն քրեական վարույթները, որոնց շրջանակներում 2023 թվականին որոշումներ չեն կայացվել:

Հաշվետու տարում՝ նախորդ տարիների հաշվեքննություններով ընթացքում գտնվող քրեական վարույթներով պետությանը պատճառված վնասի նախնական չափը, ըստ ՀՀ գլխավոր դատախազության կողմից տրամադրված տեղեկատվության, կազմում է 548.1 մլն դրամ: Կատարվում է նախաքննություն:

**Ստորև ներկայացված են 2023 թվականին իրականացված ռիսկերի վրա հիմնված հաշվեքննությունների առավել ուշագրավ արդյունքները:**

**ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՇՏ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ  
ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ**

*Հաշվեքննության օբյեկտը՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:*

*Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը՝ 2021 թվականի հունվարի 1-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 30-ը:*

Հաշվեքննության առարկան կոշտ թափոնների կառավարման գործընթացն է:

Հաշվեքննության արդյունքների վերաբերյալ եզրակացությունում նշված է, որ այս կատարողականի հաշվեքննության հիմնական նպատակն է եղել գնահատել ՀՀ-ում կոշտ կենցաղային թափոնների (ԿԿԹ) կառավարման գործընթացի արդյունավետությունը: Մասնավորապես, հաշվեքննությունն իրականացվել է պատասխանելու համար հետևյալ երեք հարցադրումներին.

1. Ընդգրկո՞ւմ է արդյոք կոշտ թափոնների կառավարման պետական քաղաքականությունը կառավարման գործընթացի ամբողջական շղթան:
2. Քաղաքականության միջոցառումների իրականացումն ապահովո՞ւմ է արդյոք ձևակերպված նպատակների իրագործումը:
3. Ապահովվա՞ծ է արդյոք ԿԿԹ կառավարման գործընթացի արդյունավետ բյուջետավորում:

Հաշվեքննության արդյունքում արձանագրվել են հետևյալ հիմնական փաստերը.

**1-ին հարցի վերաբերյալ**

- Աղբահանության և սանիտարական մաքրման կառավարման տեղական պլանների կազմման մեթոդական ուղեցույցը հաստատվել է սահմանված վերջնաժամկետից շուրջ 2.5 տարի ուշացումով, իսկ համայնքների կողմից կազմված պլաններ դեռևս առկա չեն:
- Չնայած կարգավորումներում նշանակալի փոփոխություններին, դրանք դեռևս ամբողջականացված չեն, առկա են քննարկումների տարբեր փուլերում գտնվող իրավական ակտերի նախագծեր:

Որպես եզրակացություն նշվում է, որ **«օրենսդրությամբ սահմանված քաղաքականության միջոցառումների նպատակները հաշվեքննությունն**

**ընդգրկող ժամանակահատվածում չեն իրագործվել, հետևաբար չի պահպանվել նպատակային արդյունավետության սկզբունքը»:**

2-րդ հարցի վերաբերյալ

- 2021 և 2022 թվականների պետական բյուջեներով միջոցներ են նախատեսվել Նուբարաշենի և Աջափնյակի աղբանոցները փակելու նպատակով, սակայն նախատեսված ծրագրերը չեն իրականացվել:
- Ցածր է հանրության իրազեկվածությունը՝ թափոնների տեսակավորված հավաքման և ռեսուրսների կառավարման, ինչպես նաև թափոնների վտանգի չեզոքացման ընթացակարգերի վերաբերյալ:
- Հանրապետությունում առկա չէ աղբի հաշվառման համակարգ, մասնավորապես՝ նախարարությունում բացակայում են հետևյալ տվյալները՝
  - ըստ աղբավայրերի աղբի քանակը, տեսակները, վտանգավորության աստիճանը և այլն,
  - հողով ծածկված աղբի քանակը,
  - ցանկապատված աղբավայրերի թիվը:
- Հանրապետությունում չկա քաղաքաշինական, բնապահպանական և սանիտարական նորմերին համապատասխանող աղբավայր:

Որպես եզրակացություն նշվում է, որ **«գործող կարգավորումների հատվածավորված լինելու, ինչպես նաև ծրագրով նախատեսված միջոցառումների ոչ ամբողջական իրականացման հանգամանքներով պայմանավորված՝ ոլորտում քաղաքականության շրջանակում ձևակերպված նպատակներին գործնականում հնարավոր չէ հասնել, հետևաբար չի պահպանվել նպատակային արդյունավետության սկզբունքը»:**

3-րդ հարցի վերաբերյալ

Կոշտ թափոնների կառավարման համակարգի բարելավմանն ուղղված՝ թե՛ 2021 և թե՛ 2022 թվականների պետական բյուջեով նախատեսված միջոցառումները թերակատարվել են: Այսպես.

- 2021թ. նախարարության՝ բյուջեով հաստատված պլանը 81.7%-ով կրճատվել է, և նույնիսկ այդպիսի կտրուկ նվազեցումով ճշտված պլանի նկատմամբ արձանագրվել է թերակատարում՝ 6.2%-ով:
- 2021թ. «Երևանի կոշտ թափոնների կառավարման» ծրագրի շրջանակներում նախատեսված 5 միջոցառումներից 4-ը չեն իրականացվել, իսկ 1-ը կատարվել է մասնակի՝ կատարողականը կազմել է ընդամենը 8.4%:

- 2022թ. նույնպես նախարարության՝ բյուջեով հաստատված պլանը կրճատվել է՝ 81.8%-ով: Ի դեպ, 2022-ին ճշտված պլանի նկատմամբ թերակատարումն անհամեմատ ավելի մեծ է եղել՝ 48.4%:
- «Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի», «Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և բնապահպանական գործընկերության հիմնադրամի», «Եվրոպական ներդրումային բանկի» և «Եվրոպական միության հարևանության ներդրումային գործիքի» աջակցությամբ նախատեսվել էր իրականացնել «Երևանի կոշտ թափոնների կառավարման» ծրագիրը, որի հիմնական նպատակը 29 հեկտար տարածքում եվրոպական չափորոշիչներով նոր քաղաքային աղբավայրի կառուցումն էր: Այդ նպատակով 2022 թվականին նախատեսվել էր հատկացնել 2,156.4 մլն դրամ, սակայն կառավարության համապատասխան որոշումներով միջոցառումներից 4-ը հանվել են տարեկան բյուջեից, իսկ 5-րդը կատարվել է 88.1%-ով:
- Եվրոպական միության աջակցությամբ իրականացվող վարկային ծրագրի շրջանակներում նախատեսվում էր 8 մարզերում կառուցել 4 սանիտարական աղբավայր և 16 փոխբեռնման կայան: **Չնայած տարվա բյուջեով նախատեսվել է հատկացնել 600.0 մլն դրամ, ծրագիրը չի իրականացվել:**

Ամփոփելով այս մասի հետ կապված դիտարկումները՝ հաշվեքննության ընթացիկ եզրակացությունում նշված է, որ **«2021 և 2022 թվականների ընթացքում նախատեսված 18 ծրագրային միջոցառումներից 10-ն ընդհանրապես չի իրականացվել, իսկ մնացած 8-ը թերակատարվել է»:**

«Լույս» հիմնադրամը տարբեր հրապարակումներում բազմիցս անդրադարձել է պետական կառավարման համակարգում բյուջետային պլանավորման հետ կապված լրջագույն խնդիրներին: **Այս անգամ նույն խնդիրն արձանագրել են նաև հաշվեքննողները:** Հաշվեքննության ընթացիկ եզրակացությունում, մասնավորապես, նշված է, որ ԿԿԹ կառավարման գործընթացի բյուջետավորումը համապարփակ բնույթ չի ունեցել, և որ **«բյուջեային գործընթացի բոլոր փուլերում՝ պլանավորում, կադրում, հաշվեքննողականություն և աուդիտ, առկա են խնդիրներ, որոնք հանգեցրել են բյուջեային ծրագրերի նախանշված արդյունքների չիրագործման, երբեմն նաև արդյունքին չմիտված լրացուցիչ ֆինանսական ծախսերի»:** Մասնավորապես, որպես լրացուցիչ ֆինանսական ծախսի օրինակ նշված է հետևյալը. ՎՋԵԲ-ի հետ կնքված «Կոտայքի մարզի կոշտ թափոնների կառավարման ծրագիր» վարկային համաձայնագրով նախատեսված միջոցառումները նախանշված ժամկետներում չեն կատարվել, իսկ դրանց համար նախատեսված վարկային միջոցները չեն օգտագործվել, **սակայն ծրագրի շրջանակներում ստանձնած պարտավորությունների կատարման ցածր մակարդակի արդյունքում, ՀՀ կառավարության կողմից ՎՋԵԲ-ին 2018-2023**

**թվականներին վարկի սպասարկման նպատակով 01.01.2024թ. դրությամբ վճարվել է 266.1 հազ. եվրո:**

Որպես եզրակացություն նշված է, որ «**ծախսային արդյունավետության սկզբունքը չի պահպանվել**»:

Հաշվեքննությունն անդրադարձել է նաև ոլորտի լիցենզավորման գործընթացին: Մասնավորապես, կառավարության որոշման համաձայն աղբանոց շահագործող յուրաքանչյուր տնտեսավարող սուբյեկտ պետք է ունենա լիցենզիա՝ իր կողմից իրականացվող գործունեությանը (հավաքում, փոխադրում, տեղադրում, պահում, մշակում, վերամշակում, օգտահանում, հեռացում, վնասազերծում և թաղում) համապատասխանող ներդիրի առկայությամբ: Ըստ նախարարության տրամադրած տեղեկատվության՝ ՀՀ տարածքում 2020 թվականին շահագործվել է գույքագրված և քարտեզագրված 297 աղբանոց, իսկ ըստ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության՝ 2021 և 2022թթ. ընթացքում տրամադրվել է վտանգավոր թափոնների գործածության ընդամենը 3 լիցենզիա: Հաշվեքննության ընթացիկ եզրակացության մեջ նշված է, որ «**փաստացի չի իրականացվել բավարար վարչարարություն՝ լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ համապատասխան հսկողություն իրականացնելու համար**»: Ավելին, նախարարությունը չի տիրապետում ըստ առանձին տնտեսավարող սուբյեկտների՝ վտանգավոր թափոնների հավաքման, փոխադրման, տեղադրման, պահման, մշակման, վերամշակման, օգտահանման, հեռացման, վնասազերծման և թաղման գործածության տեսակների վերաբերյալ տեղեկատվությանը:

Հաշվեքննությամբ արվել է համակարգին միտված՝ 3, արդյունքին միտված՝ 2 և խնդիրներին միտված 1 առաջարկություն:

**ԱՐՏԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՖԻՆԱՆՍԱՆՏԵՍԱԿԱՆ**  
**ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ**  
**ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ**

| Հաշվեքննության օբյեկտը՝ | Արարատի | մարզի | Արտաշատի |
|-------------------------|---------|-------|----------|
| համայնքապետարան:        |         |       |          |

Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը՝ 2022թ. հունվարի 1-ից մինչև 2022թ. դեկտեմբերի 31-ը:

| Հաշվեքննության առարկան                                | Արարատի | մարզի | Արտաշատի |
|-------------------------------------------------------|---------|-------|----------|
| համայնքապետարանի ֆինանսատնտեսական գործունեությունն է: |         |       |          |

Համաձայն հաշվեքննության ընթացիկ եզրակացության՝ արձանագրվել են հետևյալ առավել էական *անհամապատասխանությունները*.

• Հաշվեքննությամբ ընդգրկված ժամանակաշրջանում համայնքի բյուջեի եկամուտների և ծախսերի կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, ընդհանրացման և հաշվետվություններում արտացոլման գործընթացները չեն համապատասխանում «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի, բյուջեի կատարման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման, ինչպես նաև լիազոր մարմնի (ՀՀ ֆինանսների նախարարության) կողմից սահմանված պահանջներին:

• Բյուջեի կատարման՝ համայնքի ավագանու որոշմամբ հաստատված տարեկան հաշվետվությունները սահմանված հինգի փոխարեն ընդամենը երկուսն են: Ընդ որում, դրանք չեն համապատասխանում լիազոր մարմնի սահմանած պահանջներին:

• Համայնքապետարանում ներքին աուդիտի համակարգը 2022 թվականի ընթացքում չի գործել: Համայնքապետարանը ներքին աուդիտի ստորաբաժանում չունի: Համայնքային բյուջեի կատարումը մասնագիտացված կազմակերպության կողմից նույնպես աուդիտի չի ենթարկվել:

• Վարձակալության հանձնված հողերի հաշվառման վերաբերյալ տվյալների միասնական բազա առկա չէ: Համայնքի գյուղական բնակավայրերում հողի վարձավճարների գծով պայմանագրերով սահմանված տույժերը չեն գանձվել:

• Համայնքի գյուղական բնակավայրերում գործել են 114 տնտեսավարող սուբյեկտներ, որոնց հետ համայնքապետարանը աղբահանության ծառայությունների մատուցման պայմանագիր չի կնքել: Ֆիզիկական անձանց և պայմանագրեր ունեցող տնտեսավարող սուբյեկտների կողմից չվճարված աղբահանության վճարների մասով օրենքով սահմանված տույժեր չեն հաշվարկվել և գանձվել:

Հաշվեքննությամբ հայտնաբերվել է խեղաթյուրման հետևյալ օրինակը. համայնքի 2022 թվականի բյուջեի տարեկան կատարման հաշվետվությամբ մի շարք ցուցանիշներ հաստատվել և հրապարակվել են դրանց փաստացի ցուցանիշների նկատմամբ էական շեղումներով: Մասնավորապես, հաշվետվությունում մի շարք եկամտատեսակների ներկայացված մեծություններն ավելի մեծ են, քան արտացոլված են համայնքի բյուջեի մուտքերի գանձապետական հաշիվների տվյալներում՝ ընդհանուր առմամբ 189.6 մլն դրամի չափով, իսկ որոշ եկամտատեսակների գծով ընդհակառակը՝ կատարողական հաշվետվությունում ներկայացված մեծությունները պակաս են գանձապետական հաշիվների տվյալներից՝ ընդհանուր առմամբ 89.4 մլն դրամով:

Ծախսերի հաշվետվության տվյալների անհամապատասխանությունն ավելի մեծ է՝ 493.8 մլն դրամ:

Որպես եզրահանգում նշված է, որ **հիշյալ անհամապատասխանությունների պատճառով համայնքի 2022 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը խեղաթյուրված է:**

Հաշվեքննությամբ տրվել է «բացասական եզրահանգում» կարծիք:

**ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ**

*Հաշվեքննության օրյեկտը՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան:*

*Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը՝ 2022թ. հունվարի 1-ից մինչև 2022թ. դեկտեմբերի 31-ը:*

Հաշվեքննության առարկան Գեղարքունիքի մարզպետարանի ֆինանսատնտեսական գործունեությունն է:

Հաշվեքննության ընթացիկ եզրակացությունում նշված է, որ հաշվեքննությամբ արձանագրվել են հետևյալ առավել էական փաստերը.

- Մարզպետարանի կողմից «Հանրակրթություն» ծրագրի շրջանակներում 116 ուսումնական հաստատությունների հետ կնքվել են 7,468.2 մլն դրամ ընդհանուր գումարով սուբսիդիայի տրամադրման պայմանագրեր: Պայմանագրային գումարների բաշխումն ըստ ուսումնական հաստատությունների և բյուջետային միջոցառումների կատարվել է «Հանրակրթություն» ծրագրում տարրական, հիմնական, միջնակարգ ընդհանուր հանրակրթության միջոցառումների տեսակարար կշիռների համամասնությամբ, ինչի արդյունքում բյուջետային ծրագրերի միջոցառումներում ներառվել են գումարներ, որոնք չեն վերաբերում տվյալ միջոցառմանը, այսինքն՝ ըստ ուսումնական հաստատությունների պայմանագրային գումարները նախատեսվել և սահմանվել են առանց իրավական ակտերով սահմանված չափորոշիչների պահպանման: Մասնավորապես՝
  - նվազագույն շեմը (տարրական դպրոցներում՝ 73 և ավելի, հիմնական դպրոցներում՝ 163 և ավելի, միջնակարգ դպրոցներում՝ 208 և ավելի) գերազանցող թվով սովորողներ ունեցող հանրակրթական դպրոցներում մեկ սովորողին ընկնող տարեկան գումարի հաշվարկում պետական հանրակրթական դպրոցների ֆինանսավորման բանաձևում լրացուցիչ գործակիցներ կիրառելիս մարզպետարանի կողմից հիմք չի ընդունվել ԿԳՄՍ նախարարի հրամանով սահմանված համապատասխան չափը,
  - պայմանագրերի հաշվարկներում մարզպետարանի կողմից չեն պահպանվել բնակավայրերի՝ ըստ բարձունքային նիշերի տարանջատման պահանջները,

- «Տարրական ընդհանուր հանրակրթություն» և «Նախադպրոցական կրթություն» միջոցառումների շրջանակներում սննդի համար հատկացվող գումարը բաշխվել է նաև մնացած բյուջետային միջոցառումներին,
- կրթության առանձնահատուկ կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման նպատակով հատկացվող լրացուցիչ ֆինանսական միջոցների գումարները նախատեսվել են բոլոր դպրոցների համար կատարված հաշվարկներում:

Այսպիսով, «Հանրակրթություն» ծրագրով ՀՀ Գեղարքունիքի մարզի ուսումնական հաստատություններին պետական բյուջեից հատկացվել է 564.4 մլն դրամի չափով ավելի գումար:

Վերը հիշատակված անհամապատասխանությունը հանգեցրել է հաշվեքննության օբյեկտի հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանի բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվության 564.4 մլն դրամի չափով խեղաթյուրմանը:

Հաշվեքննությամբ տրվել է «ոչ լիարժեք եզրահանգում» կարծիք:

### **ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՖԻՆԱՆՍԱՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ**

*Հաշվեքննության օբյեկտը՝ ՀՀ Շիրակի մարզպետարան:*

*Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը՝ 2022թ. հունվարի 1-ից մինչև 2022թ. դեկտեմբերի 31-ը:*

| Հաշվեքննության                       | առարկան | Շիրակի | մարզպետարանի |
|--------------------------------------|---------|--------|--------------|
| ֆինանսատնտեսական գործունեությունն է: |         |        |              |

Մարզպետարանը 21 դպրոցի հիմնանորոգման աշխատանքների համար կնքել է 12 պայմանագիր՝ 520.6 մլն դրամ ընդհանուր գումարով: Եվս 10.4 մլն դրամ ընդհանուր գումարով պայմանագրեր են կնքվել նախատեսված շինարարական աշխատանքների տեխնիկական և հեղինակային հսկողության համար:

Ստորև ներկայացվում են հաշվեքննությամբ արձանագրված առավել էական փաստերը:

• 2022 թվականի տարեվերջին մարզպետարանը նշված բոլոր պայմանագրերի գումարները, առանց կատարողական ակտեր ընդունելու և հանձնման-ընդունման արձանագրություններ կազմելու, կապալառուների և տեխնիկական ու հեղինակային հսկողություն իրականացնող

կազմակերպությունների դուրս գրած հարկային հաշիվների հիման վրա փոխանցել է կատարողներին: Ստացվում է, որ կատարողները, առանց շինարարական աշխատանքների կատարման, տեխնիկական և հեղինակային հսկողության իրականացման, 2022 թվականի դեկտեմբերին դուրս են գրել հարկային հաշիվներ, որոնք ընդունվել են մարզպետարանի կողմից և դրանց դիմաց ամբողջությամբ կատարվել են վճարումներ: Այսինքն՝ կատարողներին փաստացի վճարվել է պայմանագրի արժեքի 100 տոկոսի չափով կանխավճար, մինչդեռ, մրցույթի հրավերով և կնքված պայմանագրերով կանխավճար նախատեսված չի եղել: Ավելին, համաձայն ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված կարգի՝ տվյալ բնույթի ծախսերի դեպքում կանխավճարի չափը չի կարող գերազանցել ընտրված մասնակցի առաջարկած գնի երեսուն տոկոսը:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ առանձին կապալառուներ 01.06.2023թ. դրությամբ, խախտելով պայմանագրերով սահմանված ժամկետները, աշխատանքները չեն կատարել կամ կատարել են ուշացումներով:

Նշված անհամապատասխանությունները հանգեցրել են էական չափով խեղաթյուրման: Մասնավորապես, «Ապահով դպրոց» ծրագրի շրջանակներում 2022թ. վերջում դպրոցների հիմնանորոգման աշխատանքների համար մարզպետարանի հաշվետու ժամանակաշրջանի վճարված վերոհիշյալ 531.0 մլն դրամ ընդհանուր մեծությամբ գումարը «Հիմնարկի կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին» ձև Հ-2 հաշվետվությունում ցույց է տրվել որպես փաստացի ծախս՝ չնայած այդ աշխատանքների ավարտը հաստատող փաստաթղթերի բացակայությանը:

• Անհամապատասխանություն է առկա նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքի պահանջների նկատմամբ: Մասնավորապես, 2022 թվականին մարզպետարանի աշխատավարձի ֆոնդից երկու աշխատողի վճարվել է գումարային 710.2 հազ. դրամ տուժանք (պետական բյուջեի միջոցների հաշվին), քանի որ մարզպետը նրանց ազատել է աշխատանքից այդ մասին ծանուցվելուց մեկ օր հետո՝ չպահպանելով ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված ծանուցման նվազագույն ժամկետը՝ 2 ամիսը: Բացի այդ, նշված աշխատողներին վճարվել է գումարային 327.7 հազ. դրամ արձակման նպաստ, չնայած այն բանին, որ նրանք մարզպետարանում աշխատել են համատեղությամբ, իսկ համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի՝ համատեղությամբ աշխատողի աշխատանքային պայմանագիրը լուծվելու դեպքում համատեղությամբ աշխատողին արձակման նպաստ չի վճարվում:

Հաշվեքննությամբ տրվել է «*ոչ լիարժեք եզրահանգում*» կարծիք:

## ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԵՅՄՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ

*Հաշվեքննության օբյեկտը՝ ՀՀ ներքին գործերի նախարարություն:*

*Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը՝ 2021 թվականի հունվարի 1-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 30-ը:*

Հաշվեքննության առարկան սեյսմիկ պաշտպանության գործընթացն է:

Հաշվեքննության արդյունքների վերաբերյալ եզրակացությունում նշված է, որ այս կատարողականի հաշվեքննության հիմնական նպատակն է եղել պարզել սեյսմիկ պաշտպանության գործընթացի արդյունավետությունը ՀՀ տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցման, մասնավորապես՝ բնակչության անվտանգության մակարդակում:

Հաշվեքննության արդյունքում արձանագրվել են *նպատակային արդյունավետության* սկզբունքի չպահպանման հետևյալ հիմնական փաստերը.

- 2022 թվականի տարեվերջի դրությամբ սեյսմիկ ռիսկի նվազեցման ռազմավարություն առկա չի եղել:
- Բազմաբնակարան բնակելի շենքերի համապատասխանեցումը գործող սեյսմիկ նորմերի պահանջներին հրատապ լուծում պահանջող խնդիր է, **քանի որ առկա բազմաբնակարան շենքերի շուրջ 83%-ը կառուցվել է մինչև ՀՀ-ում սեյսմիկ վտանգի և նորմերի վերանայումը:**
- Չկա սեյսմիկ ռիսկի նվազեցման հաստատված ծրագիր, որը պահանջվում է համապատասխան իրավական ակտերով:
- Չի ընդունվել 2012 թվականին մշակված և ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացված «Երևան քաղաքի երկրաշարժի վաղ ազդարարման համակարգի ստեղծում» ծրագիրը հաստատելու մասին» նախագիծը: Չի իրականացվել ՀՀ տարածքում ուժեղ երկրաշարժի վաղ ահազանգման համակարգի նախագծի մշակումը:
- Հանրապետությունում սեյսմիկ պաշտպանության տեսակետից հատուկ և կարևոր նշանակության օբյեկտների խոցելիության գնահատման ու նվազեցման ծրագիր չի հաստատվել և չի իրականացվել: Համայնքների համար ևս սեյսմիկ պաշտպանության տեսակետից հատուկ և կարևոր նշանակության օբյեկտների սեյսմիկ խոցելիության գնահատման ծրագիր առկա չէ:  
Սեյսմիկ խոցելիության գնահատման վերաբերյալ տվյալների միասնական շտեմարան առկա չէ:
- Լիազոր մարմնի կողմից կառավարությանը չեն ներկայացվել 2021-2022թթ. սեյսմիկ պաշտպանության բնագավառի հատուկ և կարևոր նշանակության

շենքերի և շինությունների սեյսմիկ խոցելիության նվազեցման առաջարկություններ:

- Չի հաստատվել ՀՀ սեյսմիկ անվտանգության համակարգի զարգացման հայեցակարգով նախատեսված սեյսմիկ ռիսկի նվազեցման 2017-2021 թվականների միջոցառումների ծրագիրը:
- Չկա արտակարգ իրավիճակներում (մասնավորապես՝ սեյսմիկ ոլորտում) բնակչության պաշտպանության մոնիթորինգի իրականացման կարգ:
- Չի հաստատվել «Սեյսմիկ պաշտպանության բնագավառում պետական ծրագրերի իրականացման համակարգման և վերահսկման կարգը սահմանելու մասին» որոշման նախագիծը:
- Կառավարություն չի ներկայացվել ծրագրի իրականացման արդյունքների մասին տեղեկատվություն, և այն չի ընդգրկվել լիազորված մարմնի ղեկավարի՝ ԱԺ ամենամյա հաղորդման մեջ: Լիազոր մարմնի ղեկավարն օրենքով սահմանված կարգով ԱԺ նիստում 2021-2022թթ. հաղորդամբ հանդես չի եկել:

Հաշվեքննությամբ արվել է համակարգին միտված՝ 6 և արդյունքին միտված 1 առաջարկություն:

Համաձայն հաշվեքննության եզրակացության՝ **չի պահպանվել նպատակային արդյունավետության սկզբունքը:**

### **ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ**

Հաշվեքննության օբյեկտը՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարություն:

Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը՝ 2020 թվականի օգոստոսի 19-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը:

Հաշվեքննության առարկան Չափագիտության զարգացման ծրագրի իրականացման գործընթացն է:

Հաշվեքննության արդյունքների վերաբերյալ եզրակացությունում նշված է, որ այս կատարողականի հաշվեքննության հիմնական նպատակներն են հանդիսացել չափագիտության ոլորտի զարգացման ծրագրի իրականացման ընթացքի և արդյունքների ուսումնասիրությունը, ինչպես նաև գործընթացի արդյունավետության գնահատումը:

Հաշվեքննության արդյունքում արձանագրվել են հետևյալ առավել էական փաստերը.

- Չափագիտության ոլորտի զարգացման ծրագրի նպատակին հասնելուն ուղղված միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ տրամաբանորեն համախմբված բյուջետային ծրագիր առկա է:
- Նախատեսված 6 տրամաչափարկման լաբորատորիաներից 01.10.2023թ. դրությամբ հիմնված և հավատարմագրված են եղել ընդամենը 2-ը:
- «Չանգվածի և հարակից մեծությունների տրամաչափարկման» և «Ջերմային մեծությունների տրամաչափարկման» լաբորատորիաների միջազգային ճանաչման գործընթացն ավարտված է:
- *Ազգային էտալոնների կազմավորման և ճանաչման մասով.*
  - Նախատեսված 12 էտալոնից 01.10.2023թ. դրությամբ կազմավորվել և ճանաչվել է 7-ը:
  - Նախատեսված է եղել հիմնել արդյունաբերական էտալոնային կենտրոն, որը նույնպես չի իրականացվել:
  - Անդամակցությունը Օրենսդրական չափագիտության միջազգային կազմակերպությանը (OIML) 01.10.2023թ. դրությամբ ապահովված չի եղել:
  - Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմինը Կշիռների և չափերի միջազգային կոմիտեի (CIPM) չափումների և էտալոնների «Փոխադարձ ճանաչման համաձայնագրին» (MRA) չի միացել:
  - 7 կազմավորված էտալոններից այլ երկրների տրամաչափարկման մարմինների հետ որևէ համեմատություն չի կատարվել:
- Եվրասիական ազգային չափագիտական կառույցների համագործակցության տարածաշրջանային կազմակերպության (COOMET) անդամ երկրների չափումների և տրամաչափարկումների՝ Համեմատության հիմնական տվյալների բազայում (KCDB) 01.10.2023թ. դրությամբ արձանագրվել է ՀՀ-ում տրամաչափարկման կարողությունների տողերի գրոյական քանակ:

Հաշվեքննությամբ արվել է արդյունքին և խնդիրներին միտված 2-ական առաջարկություն:

**Համաձայն հաշվեքննության եզրակացության՝ չի պահպանվել նպատակային արդյունավետության սկզբունքը:**

**ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԵՎ  
ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ**

*Հաշվեքննության օբյեկտը՝ ՀՀ ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայություն<sup>2</sup>:*

*Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը՝ 2022թ. հունվարի 1-ից մինչև 2022թ. դեկտեմբերի 30-ը:*

Հաշվեքննության առարկան ՀՀ ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության ֆինանսատնտեսական գործունեությունն է:

Հաշվեքննության ընթացիկ եզրակացությունում նշված է, որ հաշվեքննությամբ արձանագրվել են հետևյալ ուշագրավ փաստերը.

- «1988-1992 թվականներին Ադրբեջանից բռնագաղթած և Հայաստանի Հանրապետությունում ապաստանած փախստական ընտանիքների բնակարանային ապահովում» ծախսային միջոցառման գծով՝
  - որոշ գործընթացներ իրականացվել են սահմանված ժամկետի խախտումով,
  - պայմանագիր կնքելու առաջարկը գրավոր ծանուցման փոխարեն արվել է հեռախոսակապի միջոցով,
  - վկայագրերի տրամադրման գործընթացը մեկնարկելու վերաբերյալ տեղեկատվությունը մամուլում հրապարակված լինելու վերաբերյալ առկա չէ հիմնավոր ապացույց,
  - 2022 թվականի ընթացքում՝
    - բնակարանների գնման վկայագրերի (ԲԳՎ) տրամադրման հարցերով հանձնաժողովի նիստեր չեն գումարվել,
    - աջակցություն ստացող անձանց վերջնական ցուցակները նախարարի կողմից չեն հաստատվել,
    - «ԲԳՎ-ի միջոցով բնակարան ձեռք բերելու համար աջակցություն ստանալու մասին» պայմանագրեր չեն կնքվել,
    - ԲԳՎ-ներ չեն տրամադրվել,
  - միջոցառման կատարողականում գրոյական ցուցանիշի պայմաններում, ՀՀ ֆինանսների նախարարի հրամանի

<sup>2</sup> Հաշվեքննվող ժամանակահատվածում որպես հաշվեքննության օբյեկտ գործել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միգրացիոն ծառայությունը, որը ՀՀ ներքին գործերի նախարարության ստեղծումից հետո (16.12.2022թ.) ընդգրկվել է դրա կազմում՝ որպես Միգրացիայի և քաղաքացիության ծառայություն:

դրույթներին ոչ համապատասխան, ձևակերպվել է 825.0 մլն դրամի փաստացի ծախս:

Հաշվեքննությամբ տրվել է «ոչ լիարժեք եզրահանգում» կարծիք:

**ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ  
ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ**

Հաշվեքննության օրյեկտը՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե:

Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը՝ 2022թ. հունվարի 1-ից մինչև 2022թ. դեկտեմբերի 31-ը:

Հաշվեքննության առարկան ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ֆինանսատնտեսական գործունեությունն է:

Հաշվեքննության ընթացիկ եզրակացությունում նշված է, որ հաշվեքննությամբ հայտնաբերվել են հետևյալ էական *անհամապատասխանությունները*.

- 2022 թվականի ընթացքում գործող բոլոր 57 կապալի պայմանագրերով պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող օրացուցային գրաֆիկների «Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների նվազագույն ծավալը» բաժնում ըստ փուլերի նշվել են որոշակի աշխատանքների անվանումներ, սակայն բացակայում են կապիտալ ներդրումների և շինմոնտաժային աշխատանքների ծավալների բաշխումն ըստ շենքերի, շինությունների և շինարարության ժամանակահատվածների: Փաստացի համաձայնագրերում բացակայում են պատվիրված աշխատանքների անվանումները, ծավալները և դրանց կատարման ժամկետները: Այսինքն՝ ստացվում է, որ շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողությունն իրականացնող կազմակերպությունները չեն տիրապետել այն աշխատանքների տեսակներին, անվանումներին, ծավալներին և դրանց կատարման ժամկետներին, որոնց նկատմամբ պետք է իրականացնեին կատարման ժամկետի և որակի տեխնիկական հսկողություն: Ավելին, հաջորդիվ կնքված համաձայնագրերում այս բաժինը անվանափոխվել է «Գումար» բաժնի, որում նշվել են դրամով արտահայտված գումարները: Այսինքն՝ դրանցում այլևս նշված չեն նույնիսկ աշխատանքային փուլերը:

Վերոհիշյալ 57 պայմանագրերից յուրաքանչյուրի համար կազմված՝ դրա կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ եզրակացություններում չեն նշվել կատարված աշխատանքների անվանումները, տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը և

ծավալը, փոխարենը «Քանակական ցուցանիշը ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի» և «Քանակական ցուցանիշը փաստացի» բաժիններում լրացվել են դրամով արտահայտված գումարներ: Այդ աշխատանքների որակի տեխնիկական հսկողության պայմանագրերի շրջանակներում կազմված եզրակացություններում չեն նշվել այդ պայմանագրերի տեխնիկական առաջադրանքով պատվիրված ծառայությունները կամ գործառույթները: Փաստացի ՀՀ օրենսդրությամբ սահմանված որևէ փաստաթղթով չեն արտացոլվել այն աշխատանքների անվանումները, քանակները և դրանց կատարման ժամկետները, որոնց կատարման վերաբերյալ պատասխանատու ստորաբաժանման գնման հայտը նախագծած ներկայացուցչից (ներկայացուցիչներից) տրվել է գրավոր դրական եզրակացություն: Ավելին, այդ աշխատանքների որակի տեխնիկական հսկողության պայմանագրերի շրջանակներում ոչ մի դեպքով չի տրվել դրական եզրակացություն տեխնիկական առաջադրանքով սահմանված գործառույթների և ծառայությունների կատարման վերաբերյալ:

- Տեխնիկական հսկողության 34 պայմանագրով փաստաթղթեր ստորագրած որոշ մասնագետ-հսկիչներ չեն հանդիսացել պատասխանատու անձ կամ չեն հանդիսացել տվյալ խորհրդատուի աշխատող: Ավելին, որոշ դեպքերում մասնագետ-հսկիչները միաժամանակ՝ ամենօրյա ռեժիմով, ծառայություն են մատուցել տարբեր համայնքներում գտնվող շինարարական օբյեկտներում, ինչը գործնականում անհնարին էր:

- Չնայած 2022թ. քաղաքաշինության բնագավառի գործունեության շինարարության իրականացման և շինարարության որակի տեխնիկական հսկողության գործունեության լիցենզիայի ներդիրի ստացման 324 դիմումներից 178-ի գծով ներկայացրած փաստաթղթերը թերի են եղել և չեն համապատասխանել կառավարության կողմից սահմանված կարգի պահանջներին, այնուամենայնիվ, դրանց բոլորի համար տրամադրվել է լիցենզիայի ներդիր:

Հաշվեքննությամբ հայտնաբերված առավել էական *խեղաթյուրումներից* են.

- Տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման 38 պայմանագրերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցերով չեն նախատեսվել ծառայությունների մատուցման առանձին փուլեր, այսինքն՝ յուրաքանչյուր պայմանագրի համար դիտարկվել է մեկ ամբողջական ծառայության մատուցում, որի ժամկետը սահմանվել է շինմոնտաժային աշխատանքների ավարտը: Մինչդեռ, կատարողները մինչև շինմոնտաժային աշխատանքների ավարտը պարբերաբար ներկայացրել են 379.8 մլն դրամ

ընդհանուր գումարի հանձնման-ընդունման արձանագրություններ, որոնց համար 2022 թվականի ընթացքում պարբերաբար վճարվել է 314.6 մլն դրամ:

- Շինարարության կապալի 21 պայմանագրերի համապատասխան համաձայնագրով 2022 թվականի համար սահմանված օրացուցային գրաֆիկներով նախատեսված ծավալը դրանցով նախատեսված ժամկետում չի կատարվել: Ավելին, կապալի 4 պայմանագրերով սահմանված աշխատանքների կատարման ընդհանուր ժամկետը ավարտվել է, սակայն կապալառուների կողմից աշխատանքներն ամբողջությամբ չեն կատարվել, ինչի արդյունքում, կապալառուներից գանձման է ենթակա 142.2 մլն դրամ տույժ:
- Տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման 20 պայմանագրերով ամենամյա հաշվետվությունները ներկայացվել են սահմանված ժամկետից ուշ (կամ ընդհանրապես չեն ներկայացվել), ինչի համար կատարողներից ենթակա է գանձման 127.7 մլն դրամի տույժ ու տուգանք:

Հաշվեքննությամբ արձանագրված խեղաթյուրումների ընդհանուր գումարը կազմում է 1,136.0 մլն դրամ: Ընդ որում, այդ գումարից միայն 743.9 մլն դրամի խեղաթյուրումները հիմք են հանդիսացել հաշվեքննության կարծիքի՝ «ոչ լիարժեք եզրահանգում», ձևավորման համար:

**ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ**  
**ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՆՈՐ**  
**ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԽԹԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՄԱՏՁԵԼԻ**  
**ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ՎԱՐԿԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ**  
**ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ**

*Հաշվեքննության օբյեկտը՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարություն:*

*Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը՝ 2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը:*

Հաշվեքննության առարկան արտադրական հնարավորությունների արդիականացման և նոր տեխնոլոգիաների ներմուծման խթանման նպատակով մատչելի պայմաններով վարկերի տրամադրման գործընթացն է:

Հաշվեքննությամբ արձանագրվել են հետևյալ առավել էական փաստերը.

- Նախարարությունը հաշվեքննողներին չի տրամադրել գործընթացի շահառու տնտեսավարող սուբյեկտների ցանկը, ֆինանսական կազմակերպությունների կողմից ներկայացվող ամսական

հաշվետվությունները, գործընթացի շրջանակում տրամադրված վարկի/լիզինգի նպատակայնության և պայմաններին համապատասխանության վերաբերյալ հավաստիացման մոնիթորինգային հաշվետվությունները՝ պատճառաբանելով, որ դրանք հանդիսանում են բանկային գաղտնիք:

- Ֆինանսական կազմակերպությունների հետ 2022 թվականին տարբեր ամիսներին նախարարության կնքած պայմանագրերով սահմանվող այն դրույթը, որ կազմակերպությունը պարտավորվում է վարկառուների/լիզինգառուների հետ կնքվող պայմանագրերում նախատեսել դրույթ, որով վերջիններս նախարարությանը տալիս են գրավոր թույլտվություն իրենց վերաբերյալ ցանկացած տեղեկություն տրամադրելու դատախազությանը, Պետական վերահսկողական ծառայությանը, Հաշվեքննիչ պալատին, ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ վերջիններիս լիազորությունների շրջանակներում համապատասխան տեղեկություններ տրամադրելու պահանջ ներկայացվելու դեպքում, մի քանի ամիս հետո կնքված համաձայնագրերում հանվել է:
- Կառավարության 2020 թվականի մարտի 26-ի «Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման առաջին միջոցառումը հաստատելու մասին» որոշմամբ ՀՀ ֆինանսների նախարարին հանձնարարվել և ՀՀ կենտրոնական բանկի նախագահին առաջարկվել է սահմանված ժամկետներում ներկայացնել օժանդակության գործիքների կիրառման կարգը՝ դրանում ամրագրելով նաև գործընթացի հրապարակային և թափանցիկ իրականացման մեխանիզմներ, այդ թվում՝ օժանդակությունից օգտվող տնտեսավարողների ցանկի հրապարակումը, սակայն հետագայում որոշման մեջ կատարված փոփոխությունների արդյունքում չի ապահովվել սահմանված օժանդակության գործիքների կիրառման կարգը, հրապարակային և թափանցիկ իրականացման մեխանիզմները, չի հրապարակվել օժանդակությունից օգտվող տնտեսավարողների ցանկը:
- Նախարարությունը հաշվեքննությունն ընդգրկող ժամանակահատվածում չի ապահովել ներքին աուդիտի գործառույթի իրականացումը:
- Նախարարությունը չի տիրապետում շահառու տնտեսավարող սուբյեկտների տարեկան իրացման շրջանառության, տարեկան արտադրանքի ծավալի, աշխատակիցների փաստացի աշխատած ընդհանուր ժամաքանակի վերաբերյալ տեղեկատվությանը:
- Նախարարությունում մշակված չեն գործընթացի իրականացման արդյունքում ակնկալվող նպատակային (թիրախային) միջնաժամկետ և վերջնարդյունքային ցուցանիշները:

Հաշվեքննությամբ արվել է համակարգին, արդյունքին և խնդիրներին միտված մեկական առաջարկություն:

Համաձայն հաշվեքննության ընթացիկ եզրակացության՝ «նախարարության կողմից հայցված տեղեկատվության չորամադրելը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական տարեկան բյուջեի «Տնտեսության արդիականացման միջոցառմանը պետական աջակցություն» ծախսային միջոցառման որակական ցուցանիշներ չսահմանելը **հաշվեքննողներին հնարավորություն չեն ընձեռել գնահատելու գործընթացի նպատակային և ծախսային արդյունավետության սկզբունքների պահպանումը**»:

**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄՈՐ ԵՎ ՄԱՆԿԱՆ**  
**ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ**  
**ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ**

Հաշվեքննության օբյեկտը՝ ՀՀ առողջապահության նախարարություն:

Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը՝ 2021 թվականի հունվարի 1-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը:

Հաշվեքննության առարկան մոր և մանկան առողջության պահպանումն է:

Հաշվեքննության արդյունքների վերաբերյալ եզրակացությունում նշված է, որ այս կատարողականի հաշվեքննության հիմնական նպատակն է եղել պարզել, թե «Մոր և մանկան առողջության պահպանում» ծրագրի պլանավորման, ֆինանսավորման և իրականացման գործընթացները որքանո՞վ են համապատասխանում նպատակային արդյունավետության, ծախսարդյունավետության և տնտեսող լինելու սկզբունքներին:

Հաշվեքննության արդյունքում արձանագրված հիմնական փաստերն են.

- Հաշվեքննությունը ներառող ժամանակահատվածում ծրագիրը սահմանված կարգով հաստատված բյուջետային անձնագիր չի ունեցել:
- Ծրագրի նպատակները նորմատիվ իրավական փաստաթղթերում ամբողջապես նկարագրված և սահմանված չեն եղել:
- Միջոցառումների համար սահմանված արդյունքային ցուցանիշները ամբողջությամբ չեն բացահայտում ինչպես ծրագրի նպատակի, այնպես էլ արդյունքային ցուցանիշների միջև կապը:
- «Երեխաներին բժշկական օգնության ծառայություններ» միջոցառման համար պետական բյուջեից 2021 և 2022 թվականներին հատկացվել է համապատասխանաբար 11.1 և 12.2 մլրդ դրամ: Նախարարության կողմից

շահառուների թվի, շահառու հանդիսանալու հանգամանքի, օրենսդրությամբ սահմանված ծառայությունների շրջանակի հասանելիության, յուրաքանչյուր ծառայության մասով շահառուների դիմելիության, ինչպես նաև միջոցառման շրջանակներում մատուցվող ծառայությունների գնագոյացման հաշվեքննության ընթացիկ եզրակացությունում ներկայացվող պայմաններում հնարավոր չի եղել ձեռք բերել բավարար և անհրաժեշտ ապացույցներ՝ գնահատելու տվյալ միջոցառման նպատակային, ծախսարդյունավետ և տնտեսող լինելը:

- Ծրագրի շրջանակներում ՀՀ առողջապահության նախարարի համապատասխան հրամանով կիրառված գների հաշվարկման համար հիմք հանդիսացող մեթոդաբանության գործածումը չի հիմնավորվել:

Հաշվեքննությամբ արվել է համակարգին միտված՝ 1 և խնդիրներին միտված 2 առաջարկություն:

Համաձայն հաշվեքննության եզրակացության՝ **«վերոգրյալ և այլ փաստերը ՀՊ-ին հնարավորություն չեն ընձեռել իրականացնելու «Մոր և մանկան առողջության պահպանում» ծրագրի նպատակային, ծախսային արդյունավետության և տնտեսման սկզբունքի պահպանման ամբողջական գնահատումը, իսկ ձեռք բերված առանձին ապացույցներն ու փաստերը բավարար չեն եզրահանգելու, որ ծրագրի ծախսերն իրականացվել են նպատակային, ծախսային արդյունավետության և տնտեսման սկզբունքների պահպանմամբ»:**

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ  
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ  
ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ**

Հաշվեքննության օբյեկտները՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայություն:

Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը՝ 2021 թվականի հունվարի 1-ից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը:

Հաշվեքննության առարկան Զբաղվածության ծրագրի իրականացման գործընթացն է:

Տարեկան հաղորդման մեջ որպես հաշվեքննությամբ արձանագրված՝ նպատակային արդյունավետության սկզբունքի չպահպանման օրինակներ նշված

են հետևյալ փաստերը.

- «Զբաղվածության մասին» օրենքով սահմանված պետական քաղաքականության նպատակներին հասնելու համար իրագործվող միջոցառումներն ունեն աշխատաշուկայում առաջարկի վրա ազդելու սահմանափակ ներուժ, իսկ պահանջարկի վրա ազդեցություն ենթադրող քաղաքականության միջոցառումներ բավարար չափով ներառված չեն:
- Զբաղվածության ծրագրի շրջանակում իրականացվող միջոցառումների կանխատեսումային միջանկյալ արդյունքներով չի հիմնավորվում գործազրկության կրճատման և զբաղվածության աճի թիրախավորված ցուցանիշի, ինչպես նաև աշխատաշուկայում առաջարկի և պահանջարկի հավասարակշռության հասնելու՝ չափելի արդյունքի վրա ազդեցությունը:

Հաշվեքննությամբ արվել է համակարգին միտված՝ 2, արդյունքին միտված՝ 2 և խնդիրներին միտված 1 առաջարկություն:

Համաձայն հաշվեքննության եզրակացության՝ **չի պահպանվել նպատակային արդյունավետության սկզբունքը:**

#### **ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆ**

*Հաշվեքննության օբյեկտը՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտե:*

*Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը՝ 2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 30-ը:*

Հաշվեքննության առարկան էլեկտրոնային առևտրի և ծառայությունների մատուցման հարկման գործընթացն է:

Հաշվեքննության արդյունքում արձանագրվել են հետևյալ հիմնական փաստերը.

- ՀՀ-ում առկա են օրենսդրական անհրաժեշտ կարգավորումներ, ինչպես նաև բավարար լիազորություններ և գործիքակազմ՝ էլեկտրոնային առևտրի և ծառայությունների մատուցման հարկումն արդյունավետ և դինամիկ իրականացնելու համար:
- Չի ապահովվել միջգերատեսչական աշխատանքային խմբի մասնակիցների միջև համագործակցության բավարար մակարդակ, ինչի հետևանքով միջգերատեսչական աշխատանքային խմբի<sup>3</sup> կողմից կատարվելիք

<sup>3</sup> Խմբում ներգրավված են 7 պաշտոնատար անձինք՝ ՊԵԿ-ից և 2-ական պաշտոնատար անձինք՝ ՀՀ էկոնոմիկայի և ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություններից:

գործողությունների հիմքում դրված նպատակներն ամբողջությամբ չեն իրագործվել:

Հաշվեքննությամբ արվել է համակարգին միտված՝ 1, արդյունքին միտված՝ 2 և խնդիրներին միտված 1 առաջարկություն:

Համաձայն հաշվեքննության եզրակացության՝ էլեկտրոնային առևտրի և ծառայությունների մատուցման հարկման գործընթացում հաշվեքննությունն ընդգրկող ժամանակահատվածում պահպանվել է *նպատակային արդյունավետության* սկզբունքը:

**ՀՊ-ի համագործակցությունը ՀՀ գլխավոր դատախազության հետ<sup>4</sup>**

| N  | Թեմա                                                                                                                                                                  | Հրապարակման/տրամադրման ամսաթիվը | Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը | Ծանոթություն                                                                                                                      |
|----|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|---------------------------------|------------------------------------------|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| 1. | ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն. դպրոցների սեյսմիկ անվտանգության մակարդակի բարձրացման վարկային և դրամաշնորհային ծրագիր                   | 10.10.2022թ.                    | 01.01.2017-31.12.2019թթ.                 | 10.01.2023թ. նախաձեռնվել է քրեական վարույթ, գտնվում է նախաքննության փուլում: Պետությանը պատճառված վնասը կազմում է 204.0 մլն դրամ: |
| 2. | ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե. 2021թ. պետական բյուջեի կատարում                                                            | 29.09.2022թ.                    | 01.01.2021-31.12.2021թթ.                 | 09.11.2023թ. նախաձեռնվել է քրեական վարույթ, գտնվում է նախաքննության փուլում: Պետությանը պատճառված վնասը կազմում է 303.0 մլն դրամ: |
| 3. | ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե. 2021թ. պետական բյուջեի կատարում                                                            | 29.09.2022թ.                    | 01.01.2021-31.12.2021թթ.                 | 11.01.2023թ. նախաձեռնվել է քրեական վարույթ, գտնվում է նախաքննության փուլում: Պետությանը պատճառված վնասը կազմում է 36.1 մլն դրամ:  |
| 4. | ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե. 2021թ. պետական բյուջեի կատարում                                                            | 29.09.2022թ.                    | 01.01.2021-31.12.2021թթ.                 | 09.01.2023թ. նախաձեռնվել է քրեական վարույթ, գտնվում է նախաքննության փուլում:                                                      |
| 5. | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն. պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործում, բյուջետային մուտքերի ապահովում և պետական սեփականության կառավարում | 05.03.2019թ.                    | 01.01.2017-30.09.2018թթ.                 | 06.10.2023թ. նախաձեռնվել է քրեական վարույթ, գտնվում է նախաքննության փուլում: Պետությանը պատճառված վնասը կազմում է 4.7 մլն դրամ:   |
| 6. | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն. պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործում,                                                                   | 05.03.2019թ.                    | 01.01.2017-30.09.2018թթ.                 | 03.04.2023թ. նախաձեռնվել է քրեական վարույթ, գտնվում է նախաքննության փուլում: Պետությանը պատճառված վնասը կազմում է 0.4 մլն         |

<sup>4</sup> ՀՀ հաշվեքննիչ պալատի հրապարակած և դատախազության պահանջով տրամադրված հաշվեքննությունների արդյունքների հիման վրա հարուցված վարույթներ: Հավելվածում ներառված չէ պետական գաղտնիք պարունակող հաշվեքննությունների վերաբերյալ տեղեկատվությունը:

|    |                                                                                                                                                                                                           |              |                          |                                                                  |
|----|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--------------|--------------------------|------------------------------------------------------------------|
|    | բյուջետային մուտքերի ապահովում և պետական սեփականության կառավարում                                                                                                                                         |              |                          | դրամ:                                                            |
| 7. | ՀՀ ոստիկանություն. 2022 թվականի պետական բյուջեի երեք և վեց ամիսների կատարում                                                                                                                              | 27.07.2022թ. | 01.01.2022-30.06.2022թթ. | 24.11.2023թ. որոշում է կայացվել քրեական վարույթը կարճելու մասին: |
| 8. | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայություն. պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործում, բյուջետային մուտքերի ապահովում և պետական սեփականության կառավարում | 11.12.2019թ. | 01.01.2018-31.12.2018թթ. | 12.12.2023թ. որոշում է կայացվել քրեական վարույթը կարճելու մասին: |

---

**«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: